Կնքված պայմանագրերի մասին հայտարարություն

Մարմաշենի վանական համալիր տանող ճանապարհի հիմնանորոգում
և հարակից տարածքի բարեկարգում
TUR-15

Ծրագրի անվանում՝ Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման
Երկիր՝ Հայաստան
Ծրագրի համար՝ P150327
Շնորհված ընկերություն՝ «Մերձմոսկովյան» ԲԲԸ
Հասցե՝ Ախուրյան շրջկենտրոն, 2601
Քաղաք/Մարզ՝ Շիրակի մարզ
Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն
Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ /ՀՏԶՀ/
Պայմանագրի կնքման ամսաթիվ՝ 21 մարտի 2023թ.
Գնման ընթացակարգի եղանակ՝ «Ազգային մրցակցային մրցույթ»
Պայմանագրի գումար՝ 656,000,059.20 (վեց հարյուր հիսունվեց միլիոն հիսունինը դրամ քսան լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:
Տևողությունը՝ շինարարական աշխատանքների մեկնարկից մինչև ավարտը, նախատեսվում է՝ *360 օր*
Պայմանագրի շրջանակը.
Նախատեսվում է՝ վանական համալիր տանող 2.4կմ ավտոճանապարհի հիմնանորոգում, ճանապարհն եզերող տեղանքից երկաթբետոնե շինարարական աղբի հեռացում, ճանապարհի եզրային շերտերի բարեկարգում, միակողմանի 1մ լայնությամբ մայթի կառուցում, ճանապարհային նշանների և զբոսաշրջային ցուցանակների տեղադրում, ճանապարհը ջրահեռացման տարրերով համալրում, արտաքին լուսավորության գծի կառուցում, համայնքային հողամասի սահմաններում ավտոկայանատեղու կառուցում, ավտոկայանատեղու հարակից տարածքում սանհանգույցի և պահակակետի կառուցում, սանհանգույցի համար ջրագծի /2,4 կմ/ և կոյուղագծի կառուցում, կոյուղու լոկալ մաքրման կայանի տեղադրում /4մ3/օր հզորությամբ/, վաճառատեղի հարթակի կառուցում, տաղավարների տեղադրում: Արտաքին էլեկտրամատակարարումն ապահովելու նպատակով՝ 40 ԿՎԱ կրպակային փակուղային ենթակայանի կառուցում, ենթակայանի էլեկտրամատակարարումը իրականացնելով 2660մ ընդհանուր երկարությամբ ստորգետնյա մալուխագծով՝ սնուցումն ապահովելով 110/35/10ԿՎ ենթակայանի Վանք 10 ԿՎ ուղղության ՏԵ4099-ի10 ԿՎ ճյուղավորման վերջին հենարանից: Սանհանգույցի, վաճառատեղի, <Հեղնար աղբյուրի> հարակից տարածքների բարեկարգում՝ նստարաններով, աղբամաններով, զբոսաշրջային ցուցանակներով կահավորում:
Նախատեսվում է նաև Մարմաշենի վանական համալիրի տարածք մտնող ճանապարհի մոտ տեղադրել պահակակետ-մոմավաճառի կրպակ, մեքենաների մուտքը արգելափակող սարքավորում, մուտքի ճանապարհի վերակառուցում և սալարկում քարե սալերով /մարմարիզացված կրաքար/, եկեղեցական կառույցներին մոտեցնող և հանգստի գոտի տանող արահետների բարեկարգում/կառուցում, արահետների սալարկում բազալտե սալիկներով, պեղումներից մնացած շինաղբի հեռացում, պեղումների արդյունքում հյուսիսային և կլոր եկեղեցիների բացված հիմքերի ծածկման աշխատանքների իրականացում, գետի ափամերձ հատվածում՝ մետաղական բազրիքով դիտահարթակի կառուցում, բազալտե 1500x325մմ x150մմ և 2250x300մմx150մմ-ոց քարերով աստիճանների կառուցում, նստարանների, աղբամանների, վանական համալիրի տարածքի արտաքին լուսավորության կազմակերպում, ցուցանակների տեղադրում, ինչպես նաև վանական համալիրի կառույցները մակերևութային ջրերից պաշտպանող լանջավոր առուների կառուցում, գոյություն ունեցող դրենաժի շարունակության կառուցման աշխատանքների իրականցում: Ճարտարապետահատակագծային առաջադրանքը և նախագծային էսքիզային լուծումները ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համաձայնեցման արդյունքում ծրագրից հանվել է վանական համալիրի տարածքի պարսպապատման գաղափարը, քանի որ հուշարձանների պահպանության վարչության և գիտամեթոդական խորհրդի անդամները միակարծիք արտահայտվեցին պարսպապատման դեմ: